Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Կոտայքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:13:13 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 45 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 3 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպում, անվճար երթևեկության քարտի ձեռքբերման կազմակերպում, 9 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ խաղերի, հետաքրքիր հանդիրումների, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ՝ առողջ ապրելակերպ, զարգացնող խաղեր, առողջական ֆիզկուլտուրա, ինտելեկտուալ, տիկնիկագործություն, որոնց մասնակցել է 38 շահառու:
  Կազմակերպվել է թվով 11 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 45 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - ✓ Սուրբ Ծնունդ,
  - ✓ Հին Նոր Տարի,
  - ✓ Տյառնընդառաջ,
  - ✓ Գրական ցերեկույթ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան օրվան,
  - ✓ «Ծննդյան օրերի նշում»,
  - ✓ «Հայրենիքի պաշտպանի օր»,
  - ✓ Հյուրերի ընդունելություն /2 անգամ/՝ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լազոր դեսպան ու «Ակցիա ընդդեմ սովի» կազմակերպության Կովկասյան ներկայացուցիչներ,
  - ✓ «Կանանց միջազգային օր»,
  - ✓ Առակի ներկայացում և քննարկում Կոտայքի մարզային գրադարանի աշխատակիցների կողմից,
  - ✓ մասնակցություն Մեղրաձորի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Մեկ տիկնիկ, մեկ ձեռ, մեկ խաղ» առաջին փառատոնին:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 12 հանդիպում՝ ուղղված արվեստաթերապիայի, խաղաթերապիայի միջոցով սթրեսի և տագնապների հաղթահարմանը, որոնց մասնակցել են 25 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
- ✓ Միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/r/FADvkKAESwLzcBjN/?mibextid=WC7FNe, https://shorturl.at/dlRU0, https://shorturl.at/wGlMP, https://shorturl.at/beqFW, https://shorturl.at/holS1),
- ✓ Խմբակներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/kot69, https://shorturl.at/fxDVW),
- ✓ այլ տեսանյութեր՝ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/aoFM9, https://www.facebook.com/share/r/xWR4uiY9p8Hvz2bP/?mibextid=WC7FNe):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.
- ➢ սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ➢ ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- ➢ աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- ➢ կենտրոնում սննդի կազմակերպում,
- ➢ լվացքի ծառայության տրամադրում,
- ➢ այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով՝
- ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և բարդ դեպքերի ուսումնասիրություններ:
- ցերեկային կենտրոնի պատասխանատուն մասնակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված ֆունկցիոնալության գնահատման թեմայով դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/45 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 33 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 45 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 25 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 38 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ | 22 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 22 |
| 5.3 | Առողջական ֆիզկուլտուրա | 18 |
| 5.4 | Ինտելեկտուալ | 17 |
| 5.5 | Տիկնիկագործություն | 9 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | - |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)